ՓՈՌ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Լազր Ենոքյան

Հեռախոս՝ +374.93.910871

Բնակչություն՝ 151

Փոռ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք։ Այն վերաբնակեցվել է 1928 թվականին Խոյի Սավրա գյուղից ներգաղթած ընտանիքներով։

Գյուղն ունի 1934 հա տարածք, սահմանակից է մարզի Զառիթափ, Մարտիրոս և Ազատեկ համայնքներին։ Ծովի մակարդակից գտնվում է 1510 մ բարձրության վրա։ Կլիման մերձարևադարձային է, ձմռանը՝ ցուրտ, ամռանը զով։

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ։

Փոռի տարածքում են գտնվում Սբ. Աստվածածին (1910 թ.), եռանավ բազիլիկ (1830 թ.) եկեղեցիները և XIII-XIV դարերի խաչքարեր։

Գյուղն ունի բուժկետ և առևտրի կրպակ։